ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N « ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69»

«20» «մարտի» 2017 թ.

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **գրասենյակային ապրանքների** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես

նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 2370975 (երկու միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար ինը հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 395163 (երեք հարյուր հիսունհինգ հազար հարյուր վաթսուներեք):

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել մինչև 20 տոկոս կանխավճար):

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

Բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված

օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է .. էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.14. Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտիի փ. 1 ՀՎՀՀ 02593108	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց 110 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 16300-7031509 ՀՎՀՀ 01548908
Գ.Չթրյան---------- /ստորագրություն/ Կ.Տ.	Տ. Ղարիբյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
<<20 >> <<մարտի>> 2017 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1	Թղթապանակ /ֆայլ/	Ցելաֆոնե, A-4 ֆորմատի, կոճգամով
2	Թղթապանակ սեղմակով	Պլաստիկ, A-4 ֆորմատի,կոշտ կազմով սեղմակով
3	Արագակար	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար
4	Կարիչի ասեղ	Գրասենյակային կարիչների N24/6 Տուփի մեջ 1000 հատ ''Կանգարո'' կամ համարժեքը:
5	Նշումների թուղթ կպչուն	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, չափսերը 7.6 x7.6սմ դեղին,տուփով/100հատ/:
6	Նոթատետր	Սովորական, A-5 ձևաչափի 70թերթ
7	Սրիչ	Մետաղյա սրիչ մատիտների համար
8	Լազերային սկավառակ/CD/	CD-R տուփով: Տուփի մեջ 50հատ
9	Լազերային սկավառակ/DVD/	DVD-R տուփով: Տուփի մեջ 50հատ
10	Ամրակ	Գրասենյակային ամրակներ, մետաղական, 50 մմ չափի թղթի տրցակները ամրացնելու համար: Տուփի մեջ 100հատ
11	Ամրակ	Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական պատվածքով, 33 մմ երկարությամբ: Տուփի մեջ 100հատ
12	Ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A-4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն,50 միկրոն
13	Մկրատ	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասսայե բռնակով, 20 սմ երկարությամբ:
14	Մատիտ	Հասարակ, սև գույնի, ծայրերը սրած:
15	Մատիտ/մեխանիկական/	Մեխանիկական մատիտ 0.7մմ տրամագծով:
16	Մատիտի միջուկ	Մեխանիկակն մատիտի համար0.7մմ տրամագծով:
17	Ռետին4	40մմ նախատեսված մատիտով գրվածքները մաքրելու համար
18	Գրիչ / գնդիկավոր /	Գնդիկավոր գրիչներ տարբեր գույների, գելային
19	Թուղթ A4	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ.: Տուփի մեջ 500հատ:
20	Կոճգամ	Մետաղյա, սովորական: Տուփի մեջ 100հատ:
21	Քանոն	Ուղիղ քանոն, գծաբաժանումներով, երկարությունը, 30 սմ, պլաստմասսայե
22	Սկոչ	Գլանափաթեթված ժապավեն , սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, չափսերը48մմ x100մ
23	Ծրար	100գր չափերը 115x225մմ սպիտակ
24	Էմուլսիա	Սոսինձ պոլիվինիլացիտատային /էմուլսիա/ 1կգ տարրայով:
25	Օրատետր/բլոկնոտ/	2017թ., տողանի 100թերթ,A5ձևաչափի
27	Ապակարիչ	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար
28	Սեղանի կոմպլեկտ հավաքածու	Գրասենյակային, սեղանի կոմպլեկտ հավաքածու 24 կտորից
29	Կնիքի բարձիկ/ավտոմատ/	Նախատեսված կնիքների համար/E-40 և ER-40/չափերի:
	ԱՋԱՓՆՅԱԿ ՔԿԱԳ Տ/Բ	
31	Թղթապանակ /ֆայլ/	Ցելաֆոնե, A-4 ֆորմատի, կոճգամով
32	Թղթապանակ կապով	Ստվարաթղթից կապով, A-4 ֆորմատի, թղթի տեսակը օֆսեթ 400գ/ք.մ, 23X34սմբարձրությունը՝4սմ,տպագրությունը իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող նմուշի համաձայն:

34	Արագակար	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար
38	Կարիչի ասեղ	Գրասենյակային կարիչների N 10 Տուփի մեջ 1000 հատ: ''Կանգարո'' կամ համարժեքը:
39	Նշումների թուղթ կպչուն	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, չափսերը 7.6 x7.6սմ դեղին,տուփով/100հատ/:
40	Նշումների թուղթ	Թուղթ նշումների համար, չափսերը9 x9 x 9սմ սպիտակ:600թերթ
41	Նշումների թուղթ /պլաստմասայե տուփով/	Պլաստմասե տուփով, գունավոր չափսերը9 x9 x 9սմ:600թերթ
42	Նոթատետր	Սովորական, A-5 ձևաչափի 70թերթ
46	Ամրակ	Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական պատվածքով, 33 մմ երկարությամբ: Տուփի մեջ 100հատ
47	Ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A-4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն,50 միկրոն
49	Մկրատ	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասսայե բռնակով, 20 սմ երկարությամբ:
51	Մատիտ/մեխանիկական/	Մեխանիկական մատիտ 0.7մմ տրամագծով:
52	Մատիտի միջուկ	Մեխանիկակն մատիտի համար0.7մմ տրամագծով:
54	Թուղթ A4	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ.: Տուփի մեջ 500հատ:
56	Շտամպի թանաք	Թանաք կնիքի բարձիկի համար
58	Ծրար	100գր չափերը 115x225մմ սպիտակ
60	Օրատետր/բլոկնոտ/	2017թ., տողանի 100թերթ,A5ձևաչափի
	ԱՋԱՓՆՅԱԿ ՍԾՏԲ	
63	Թղթապանակ կապով	Ստվարաթղթից կապով, A-4 ֆորմատի, թղթի տեսակը օֆսեթ 400գ/ք.մ, 23X34սմբարձրությունը՝4սմ,տպագրությունը իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող նմուշի համաձայն:
69	Կարիչի ասեղ	Գրասենյակային կարիչների N 10 Տուփի մեջ 1000 հատ: ''Կանգարո'' կամ համարժեքը:
70	Նշումների թուղթ կպչուն	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, չափսերը 7.6 x7.6սմ դեղին,տուփով/100հատ/:
71	Ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A-4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն,50 միկրոն
73	Մկրատ	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասսայե բռնակով, 20 սմ երկարությամբ:
77	Թուղթ A4	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ.: Տուփի մեջ 500հատ:

ԳՆՈՐԴ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Գ.Զթրյան----------
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2

<< 20 >> <<մարտի>> 2017 թ. կնքված
N <<ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69>> ծածկագրով գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

Հ/Հ	Ապրանքի անվանումը	չ/մ	մ/գ	I եռամսյակ /մինչև մարտի 31-ը/		II եռամսյակ /մինչև հունիսի 30-ը/		III եռամսյակ /մինչև սեպտեմբերի 30-ը/		IV եռամսյակ /մինչև դեկտեմբերի 25-ը/		Ընդամենը	
	Գրասենյակային ապրանքներ			քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
	ԸՆԴԱՄԵՆԸ Հ/Հ 900052473296				523600		416175		368650		522525		1830950
1	Թղթապանակ /ֆայլ/	հատ	65	30	1950	40	2600	30	1950	30	1950	130	8450
2	Թղթապանակ սեղմակով	հատ	135	25	3375	25	3375	25	3375	25	3375	100	13500
3	Արագակար	հատ	45	200	9000	200	9000	200	9000	200	9000	800	36000
4	Կարիչի ասեղ	տուփ	70	150	10500	150	10500	150	10500	150	10500	600	42000
5	Նշումների թուղթ կպչուն	տուփ	105	40	4200	50	5250	40	4200	50	5250	180	18900
6	Նոթատետր	հատ	155	10	1550	30	4650	10	1550		0	50	7750
7	Սրիչ	հատ	25	25	625	50	1250	25	625		0	100	2500
8	Լազերային սկավառակ/CD/	տուփ	70	25	1750	25	1750	25	1750	25	1750	100	7000
9	Լազերային սկավառակ/DVD/	տուփ	200	25	5000	25	5000		0		0	50	10000
10	Ամրակ	տուփ	220	20	4400	20	4400	20	4400	20	4400	80	17600
11	Ամրակ	տուփ	70	100	7000	100	7000	100	7000	100	7000	400	28000
12	Ֆայլ	հատ	7.5	2500	18750	2500	18750	2500	18750	2500	18750	10000	75000
13	Մկրատ	հատ	165	10	1650	20	3300	10	1650		0	40	6600
14	Մատիտ	հատ	25	100	2500	100	2500	100	2500	100	2500	400	10000
15	Մատիտ/մեխանիկական/	հատ	90	20	1800	20	1800		0		0	40	3600
16	Մատիտի միջուկ	տուփ	60	25	1500	25	1500		0		0	50	3000
17	Ռետին	հատ	28	50	1400	50	1400	50	1400	50	1400	200	5600
18	Գրիչ / գնդիկավոր /	հատ	25	400	10000	400	10000	400	10000	400	10000	1600	40000
19	Թուղթ A4	տուփ	1380	300	414000	200	276000	200	276000	300	414000	1000	1380000
20	Կոճգամ	տուփ	75	20	1500	20	1500	20	1500	20	1500	80	6000
21	Քանոն	հատ	40	30	1200	30	1200	30	1200	30	1200	120	4800
22	Սկոչ	հատ	300	20	6000	20	6000	20	6000	20	6000	80	24000
23	Ծրար	հատ	8	250	2000	250	2000	250	2000	250	2000	1000	8000
24	Էմուլսիա	հատ	975	2	1950	2	1950	2	1950	2	1950	8	7800
25	Օրատետր/բլոկնոտ/	հատ	1000	10	10000		0		0	20	20000	30	30000
27	Ապակարիչ	հատ	135		0	10	1350	10	1350		0	20	2700
28	Սեղանի կոմպլեկտ հավաքածու	հատ	1550		0	5	7750		0		0	5	7750

29	Կնիքի բարձիկ/ավտոմատ/	հատ	1220		0	20	24400		0		0	20	24400
	ԸՆԴԱՄԵՆԸ ՔԿԱԳ Հ/Հ 900052473304				**66765**		**67690**		**70190**		**80630**		**285275**
31	Թղթապանակ /ֆայլ/	հատ	65	5	325	5	325	5	325	5	325	20	1300
32	Թղթապանակ կապով	հատ	70	5	350		0		0		0	5	350
34	Արագակար	հատ	45	25	1125	25	1125	25	1125	25	1125	100	4500
38	Կարիչի ասեղ	տուփ	70	10	700	10	700	10	700	20	1400	50	3500
39	Նշումների թուղթ կպչուն	տուփ	100	10	1000	5	500	5	500	10	1000	30	3000
40	Նշումների թուղթ	տուփ	780	1	780	1	780	1	780	2	1560	5	3900
41	Նշումների թուղթ /պլաստմասայե տուփով/	տուփ	980	1	980	1	980	1	980	2	1960	5	4900
42	Նոթատետր	հատ	160	5	800	5	800		0		0	10	1600
46	Ամրակ	տուփ	75	5	375	10	750	5	375	10	750	30	2250
47	Ֆայլ	հատ	7.9	500	3950	500	3950	1000	7900	1000	7900	3000	23700
49	Մկրատ	հատ	175	1	175	1	175		0		0	2	350
51	Մատիտ/մեխանիկական/	հատ	100	3	300	3	300	2	200	2	200	10	1000
52	Մատիտի միջուկ	տուփ	70	5	350	5	350	5	350	5	350	20	1400
54	Թուղթ A4	տուփ	1400	38	53200	38	53200	38	53200	44	61600	158	221200
56	Շտամպի թանաք	հատ	105	1	105	1	105	1	105	2	210	5	525
58	Ծրար	հատ	9	250	2250	250	2250	250	2250	250	2250	1000	9000
60	Օրատետր/բլոկնոտ/	հատ	1400		0	1	1400	1	1400		0	2	2800
	ԸՆԴԱՄԵՆԸ ՍԾՏԲ Հ/Հ 900052473569				**54080**		**66680**		**66995**		**66995**		**254750**
63	Թղթապանակ կապով	հատ	70	2	140	2	140	3	210	3	210	10	700
69	Կարիչի ասեղ	տուփ	70	7	490	7	490	8	560	8	560	30	2100
70	Նշումների թուղթ կպչուն	տուփ	100	5	500	5	500	5	500	5	500	20	2000
71	Ֆայլ	հատ	8	100	800	100	800	100	800	100	800	400	3200
73	Մկրատ	հատ	175	2	350	2	350	3	525	3	525	10	1750
77	Թուղթ A4	տուփ	1400	37	51800	46	64400	46	64400	46	64400	175	245000

Գ Ն Ո Ր Դ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՎՀՀ 02593108

Գ. Հեթյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3

<< 20 >> <<մարտի>> 2017 թ. կնքված
N <<ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69>> ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի,ծառայության անվանումը	Նախատեսված է ֆինանսավորել Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեից, այդ թվում												Ընդամենը տարեկան
	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
Գրասենյակային ապրանքներ	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
Հ/Հ 900052473296	....	....	523600	939775	939775	939775	1308425	1308425	1308425	1830950	1830950	1830950	1830950
ՔԿԱԳ Հ/Հ 900052473304	....	....	66765	134455	134455	134455	204645	204645	204645	285275	285275	285275	285275
ՍԾՏԲ Հ/Հ900052473569	....	....	54080	120760	120760	120760	187755	187755	187755	254750	254750	254750	254750

*** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողական կարգով**

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՎՀՀ 02593108

Գ.Չոբոյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
« » « » 2017 թ.
N « ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
—

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական ագրի համառոտ արադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ակա գումարը զար դրամ/	Վճարման ետը /ըստ արման ակացույցի/
			ըստ պայմանագրով ստատված գնման ամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով ստատված գնման ամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N « ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
--
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «20» «մարտի» 2017 թ.

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ գրասենյակային ապրանքների ձեռքբերման <<ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ

ք. Երևան, Վարդանանց 110

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 16300-7031509

ՀՎՀՀ 01548908

Տ. Ղարիբյան ----------

(ստորագրություն)

Կ.Տ.

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 16300-7031509

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01548908

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ 237098 /երկու հարյուր երեսունյոթ հազար իննսունութ/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում*

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/69

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.